

ապաշխարութեան եւ անոնց ձեւով, անասնոց ալ ծով բռնել տալով (անդ): Թէեւ այս տեղեկութիւնս անձանօթ է երիցագոյն մեկնչին, որ է Արշարունւոյն, բայց ինձ ալ հաւանական կը թուի, նկատելով մանաւանդ մեր պահեցողութեան յար եւ նման ձեւը, եւ Յովհանու յիշատակաւ աւարտը (անդ): Ասոր չի հակառակիր Տաթեւացւոյն ըսածն ալ, թէ յառաջագոյն «եօթանասուն օր» էր մեծ պահքը, որ է Առաջաւորէն սկսեալ՝ տասը շաբաթ, զոր «դեռ եւս պահեն, կ'ըսէ, եւ ունին հաստատ ազգն Խփտի եւ Հապաշի մինչեւ ցայսօր». եւ թէ յետոյ Ս. Հարք «գերկու շաբաթն ի մէջն բարեկենդանացոցին» (Քրգ. ձմր. 146): Բարեկենդանի միջամտութեան մասին այս կարծիքը կ'ելնէր մինչեւ Գագիկ Բ արքայ կարուց (Ուռ. 212), եւ աւելի վեր մինչեւ կամրըջածորեցւոյն օրերը, ուր թէ եօթանասնօրեայ պահքը եւ թէ անոր այդ վերածումն ոմանցմէ Ս. Կիւրեղ երուսաղեմացւոյն կ'ընծայուէր (Տօն. Գ): Առանց փնդոելու՝ ո՛վ էր իսկապէս ազոր հեղինակը, կրնանք հաւանիլ իւր իրականութեան, եթէ յիրաւի դեռ կը տեսնէր Տաթեւացին եօթանասնօրեայ պահեցողութիւնն այլոց քով, որոյ առաջին շաբաթը կրնար նինուէի յիշատակին նուիրուած լինել: